**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2**
**ԲՄԾՁԲ-ԱԻՆ-22/105 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**
**ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ**

***Մասնակցում էին՝***
***Հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ գնահատման պատասխանատու***
*Արմեն Սարգսյան – Արտակարգ իրավիճակների նախարարի խորհրդական*
***Անդամներ՝ ԳՊ/ԳԱ գնահատող անձնակազմ***
*Վարուժան Քաքարյան - ԱԻՆ Խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող*
*Նվեր Մարգարյան - Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության բնակչության պաշտպանության և աղետների ռիսկի նվազեցման վարչության տեխնածին վթարների բաժնի պետ*
***Անդամներ՝ ԳՊ/ԲԱ – բացող անձնակազմ***
*Մուշեղ Բեգլարյան - ԱԻՆ իրավաբանական վարչության օրենսդրության բաժնի գլխավոր իրավաբան*
***Հանձնաժողովի քարտուղար՝***
*Արմինե Գալուստյան - ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ*

*Բացակայում է*
*Հանձնաժողովի անդամ*
*Տիգրան Գևորգյան - Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության բնակչության պաշտպանության և աղետների ռիսկի նվազեցման վարչության տեխնածին վթարների բաժնի ավագ հրահանգիչ*

**1. Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա, ժամի մասին**

**1.1** «Նաիրիտ Գործարան» ՓԲԸ-ում առկա վտանգավոր քիմիական թափոնների՝ այրման միջոցով վնասազերծման ծառայության ձեռքբերման նպատակով ԲՄԾՁԲ-ԱԻՆ-22/105 ծածկագրով ընթացակարգի հրավերը Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով 2022թ. հունիսի 9-ին հրապարակվել է գնումների էլեկտրոնային համակարգում՝ www.armeps.am կայքում /Համակարգ/ և գնումների պաշտոնական տեղեկագրում:

**1.2** Գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

**1.3** Գնային առաջարկ պարունակող հայտերը բացվել են էլեկտրոնային եղանակով 20.07.2022թ.:

**1.4** ***Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները, տվյալները***

| *N* | *Մասնակցի անվանումը* | *հասցե, հեռախոս, էլ. Փոստ* |
|---|---|---|
| *1* | *«Էկոլոգիա Վ.Կ.Գ» ՍՊԸ* | *Արմավիրի մ, ք. Վաղարշապատ, Մարգարյան խճ. 4/1, 077 66 90 80, ekovkh@gmail.com* |
| *2* | *«Էկո-Գրուպ Ինտերնեյշնլ» ՍՊԸ* | *ք. Երևան, Արաբկիր, Նիկոլ Դումանի փ, շ 53, բն 5, 098 00 15 88, eco-group.info@yandex.ru* |

**2. Տվյալներ՝ հայտերը կազմելու, ներկայացնելու, սահմանված կարգի պահանջներին համապատասխանության և բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին**

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան

2.2 «Էկո-Գրուպ Ինտերնեյշնլ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով սահմանվող փաստաթղթերը և բավարարում են հրավերի պահանջներին:

2.3 «Էկոլոգիա Վ.Կ.Գ» ՍՊԸ կողմից ներկայացվել է ՀՀ կառավարության 2011թ սեպտեմբերի 22-ի «ԷԿՈԼՈԳԻԱ Վ.Կ.Հ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրված վտանգավոր թափոնների վնասազերծման լիցենզիան վերաձևակերպելու մասին» թիվ 1370-Ա որոշման հիման վրա 2011թ հոկտեմբերի 10-ին տրամադրված «Հայաստանի հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության» թիվ 3-11 լիցենզիա:

**3. Նախահաշվային գները, մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները.**

ՀՀ դրամ

| Չ/հ | գնման առարկայի անվանումը | մասնակիցների | |
|---|---|---|---|
| | | անվանումը | գնային առաջարկները (մեկ տոննայի համար առաջարկվող գնով) ՀՀ դրամ |
| 1 | «Նաիրիտ Գործարան» ՓԲԸ վտանգավոր քիմիական թափոնների՝ այրման միջոցով վնասազերծման ծառայություն | «Էկո-Գրուպ Ինտերնեյշնլ» ՍՊԸ | 870 840 |
| | | «ԷԿՈԼՈԳԻԱ Վ.Կ.Հ.» ՍՊԸ | 1 500 000 |
| 2 | «Նաիրիտ Գործարան» ՓԲԸ վտանգավոր քիմիական թափոնների՝ այրման միջոցով վնասազերծման ծառայություն (լաք-էթինոլ) | | |

3.1 Հայտեր չեն ներկայացվել 2-րդ չափաբաժնով

***22.07.2022թ.***

***4. Հանձնաժողովը որոշեց.***

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (Կարգ) 67-րդ կետով՝ կասեցնել նիստը և հարցում կատարել ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն ներկայացված լիցենզիայի գործողության շրջանակներում «Նաիրիտ Գործարան» ՓԲԸ-ում առկա վտանգավոր քիմիական թափոնների՝ այրման միջոցով վնասազերծման ծառայության մատուցման թույլտվության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

***12.08.2022թ.***

***Ընդունել ի գիտություն.***

Շրջակա միջավայրի նախարարության կողմից ներկայացվել է թիվ 4/09.2/11080 գրությունը (կցվում է), ըստ որի «ԷԿՈԼՈԳԻԱ Վ.Կ.Հ.» ՍՊԸ-ն չի կարող մատուցել «Նաիրիտ Գործարան» ՓԲԸ-ում առկա վտանգավոր քիմիական թափոնների՝ այրման միջոցով վնասազերծման ծառայությունը: «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մարտի 26-ի N449-Ա որոշման հիման վրա վտանգավոր թափոնների վնասազերծման գործունեությամբ զբաղվելու՝ բժշկական թափոնները ոչնչացնելու համար, 2009 թվականի մարտի 30-ին «Էկոլոգիա Վ.Կ.Հ.» ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման կամ վնասազերծման կամ պահպանման կամ փոխադրման և տեղադրման գործունեության» N3 լիցենզիան, ինչը Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 22-ի N1370-Ա որոշման հիման վրա վերաձևակերպվել է, և Ընկերությանը 2011 թվականի հոկտեմբերի 10-ին տրամադրվել է «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության» N3-11 լիցենզիան: Վերջինիս տրամադրման հիմք հանդիսացել է 2008 թվականի հոկտեմբերի 17-ին տրված ՆԲՓ 125 շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացությունը (կից ներկայացվում է), համաձայն որի Ընկերությունը կարող է իրականացնել միայն բժշկական թափոնների վնասազերծում՝ այրման միջոցով:

Ընկերությանը «Էջմիածին համայնքում վտանգավոր թափոնների ոչնչացման համալիրի վերազինման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության» վերաբերյալ 2021 թվականի հոկտեմբերի 29-ին տրվել է ՆԲՓ 0208-21 պետական փորձաքննական դրական եզրակացություն (կից ներկայացվում է)՝ պայմանով, որ բացառվելու է այրման վառարանում արտադրական թափոնների այրումը, քանի որ վառարանը նախատեսված է բժշկական թափոնների այրման համար:

Հետևաբար Ընկերությունը չի կարող «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ում առկա վտանգավոր քիմիական թափոնների հետ կապված գործունեությամբ զբաղվել, քանի որ տվյալ թափոնների վերամշակման և վնասազերծման համար շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության դրական եզրակացություն, վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզիա և լիցենզիայի համապատասխան ներդիրներ չի ստացել»:

***12.08.2022թ.***

***5. Հանձնաժողովը որոշեց.***

5.1 Ղեկավարվելով Կարգի 67-րդ կետով՝ մերժել «Էկոլոգիա Վ.Կ.Հ.» ՍՊԸ հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

5.2 Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և կարգի 40-րդ կետով՝ «Էկո-Գրուպ Ինտերնեյշնլ» ՍՊԸ հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

5.3 Ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով՝ նիստը կասեցնել մինչև 2022թ. օգոստոսի 17-ը, ժամը 11.00 և «Էկո-Գրուպ Ինտերնեյշնլ» ՍՊ ընկերությանը հրավիրել գների նվազեցման շուրջ բանակցությունների: Բանակցությունների նիստը տեղի կունենա 2022թ. օգոստոսի 17-ին, ժամը 10.00-ին, ՀՀ, ք. Երևան, Դավիթաշեն 4-րդ թաղ, Ա. Միկոյան 109/8 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

**Հանձնաժողովի**

| | |
|---|---|
| նախագահ՝ | Ա. Սարգսյան |
| անդամներ՝ | Վ. Քաբաբյան |
| | Ն. Մարգարյան |
| | Մ. Բեգլարյան |
| քարտուղար՝ | Ա. Գալուստյան |

**ПРОТОКОЛ N2**
**ЗАСЕДАНИЯ ОЦЕНОЧНОЙ КОМИССИИ ПО ОТКРЫТИЮ ОТКРЫТОГО КОНКУРСА**
**ПОД КОДОМ ԲՄԾՁԲ-ԱԻՆ-22/105**

Присутствовали:
**Председатель заседания комиссии**
Армен Саргсян - Советник министра по чрезвычайным ситуациям РА
**Члены комиссии: Ответственный Аппарат по оценке - ОПЗ/ОП**
Варужан Кабабян - советник МЧС - координатор отдельных функций в структурных подразделениях
Нвер Маргарян-начальник отдела техногенных аварий управления защиты населения и снижения риска бедствий спасательной службы МЧС
**Члены комиссии: Ответственный Аппарат по вскрытию – ОПЗ/ОРПТ**
Мушег Бегларян -Главный юрист отдела законодательства МЧС
**Секретарь комиссии**
Армине Галустян – Главный специалист отдела организации закупок
Отсутсвует
Тигран Геворгян - Старший инструктор отдела техногенных аварий управления защиты населения и снижения риска бедствий спасательной службы МЧС

***1. Сведения о месте, дне, времени открытия заявок***

1.1 Приглашение процедуры под кодом ԲՄԾՁԲ-ԱԻՆ-22/105, для приобретения услуг по обезвреживанию опасных химических отходов посредством сжигания ЗАО «Завод Наирит», было опубликовано 9 июня 2022 года, посредством системы электронных закупок Armeps (далее Система), в соответствии с Законодательством о закупках РА.

1.2 Заявки были открыты посредством системы в 20.07.2022года.

1.3 Председатель оценочной комиссии огласил цену на закупаемый в рамках настоящей процедуры товара выраженную одним числом.

***1.4 Наименования, данные участников, подавших заявки***

| *N* | *Наименование участников* | *Адрес, телефон, эл. Почта* |
|---|---|---|
| *1* | *ООО «Экология В.К.Г»* | *Армавирская обл,г. Вагаршапат, ул. Маргара. 4/1, 077 66 90 80, ekovkh@gmail.com* |
| *2* | *ООО «Эко-Груп Интернейшнл»* | *г. Ереван, Арабкир, ул. Никола Думана, с. 53, кв. 5, 098 00 15 88, eco-group.info@yandex.ru* |

***2. Данные о соответствии составления и представления заявок требованиям приглашения, о наличии в каждой вскрытой заявке требуемых приглашением документов и данные о том, что представленные каждым участником документы составлены в соответствии с условиями, определенными приглашением***

2.1 Заявки, представленные участниками, составлены в соответствии с требованиями, установленными приглашением.

2.2 В заявке, представленной ООО «Эко-Груп Интернейшнл», есть требуемые приглашением документы и соответствуют установленным приглашением требованиям.

2.3 ООО «Экология В.К.Г» представило лицензию № 3-11 «О деятельности по переработке, обезвреживанию, хранению, транспортировке и установке опасных отходов в Республике Армения", предоставленную 10 октября 2011 года на основании постановления правительства РА № 1370-а от 22 сентября 2011 года:

***3. Сметная цена товара, ценовые предложения участников***

*Драмов РА*

| *N лота* | *Наименование предмета закупок* | *Наименование участников* | *ценовые предложения (по предлагаемой цене за тонну) драм РА* |
|---|---|---|---|
| *1* | *Услуги по обезвреживанию опасных химических отходов посредством сжигания ЗАО «Завод Наирит»* | *ООО «Эко-Груп Интернейшнл»* | *870 840* |
| | | *ООО «Экология В.К.Г»* | *1 500 000* |

Заявки не были предъявлены по 1-му лоту.

***22.07.2022***

***4. Комиссия решила:***

Руководствуясь 67-м пунктом «Порядка организации процесса закупок» (Порядок), утвержденного Решением Правительства Республики Армения № 526-Н от 04.05.2017г, приостановить заседание и отправить запрос в министерство окружающей среды РА о разрешении на предостовление услуг по обезвреживанию опасных химических отходов, имеющихся в ЗАО «Завод Наирит» путем сжигания в рамках действия лицензии.

Принято решение: за – 4, против -0.

***12.08.2022***

***Принять к сведению:***

Министерство окружающей среды представило письмо № 4/09.2/11080 (прилагается), согласно которому ООО «Экология В.К.Г.» не может предоставить услуги по обезвреживанию опасных химических отходов посредством сжигания ЗАО «Завод Наирит». на основании постановления Правительства Республики Армения N449-а от 26 марта 2009 года, ООО «Экология В.К.Г.» 30 марта 2009 года получила лицензию для осуществления деятельности по обезвреживанию опасных отходов с целью уничтожения медицинских отходов, которая на основании постановления Правительства Республики Армения N1370-а от 22 сентября 2011 года переоформлена, и 10 октября 2011 года компании была выдана лицензия N3-11 «на переработку, обезвреживание, хранение опасных отходов в Республике Армения». Основанием для предоставления последнего послужило выданное 17 октября 2008 года НБП 125 положительное заключение экспертизы воздействия на окружающую среду (прилагается), согласно которому компания может осуществлять только обезвреживание медицинских отходов путем сжигания.

29 октября 2021 года компании было выдано положительное заключение государственной экспертизы НБП 0208-21 «об отчете об оценке воздействия на окружающую среду работ по переоснащению комплекса по уничтожению опасных отходов в общине Эчмиадзин» (прилагается) при условии исключения сжигания отходов производства в печи для сжигания, так как печь предназначена для сжигания медицинских отходов.

Следовательно, компания не может заниматься деятельностью, связанной с опасными химическими отходами, имеющимися в ЗАО «Завод Наирит», поскольку не получила положительного заключения экспертизы воздействия на окружающую среду для переработки и обезвреживания данных отходов, лицензию на деятельность по использованию опасных отходов и соответствующих вкладышей в лицензии.

***12.08.2022***

***5. Комиссия решила:***

5.1 Руководствуясь 67-м пунктом Порядка, отклонить заявку ООО «Экология В.К.Г.»

Принято решение: за – 4, против -0.

5.2 Согласно ч части 1 статьи 34 Закона РА «О закупках» и пункту 40 порядка, оценить заявку ООО «Эко-Груп Интернейшнл» удовлетворительно.

Принято решение: за – 4, против -0.

5.3 Руководствуясь 5-м подпунктом 40-го пункта Порядка, приостановить заседание до 11.00 часов 17 августа 2022года и пригласить ООО «Эко-Груп Интернейшнл» на переговоры по снижению цен. Заседание переговоров состоится 17-го августа 2022года, в 11:00 часов.

Принято решение: за – 4, против -0.

**Комиссия**

Председатель- ____________ А. Саргсян

Члены- ____________ В. Кабабян

____________ Н. Маргарян

____________ М. Бегларян

Секретарь- ____________ А. Галустян